ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՀՄԱՆՎԱՆ ԵԶԱԿԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Պատմ. գիտ. դոկտոր Հ. Մ. ԲԱՐԹԻԿՅԱՆ

Ինչպես հայտնի է, Արևելա-հռոմեական կայսրության և սասանյան Իրանի միջև Հայաստանի առաջին բաժանմամբ (387 թ.) Արշակունիների տերության շուրջ մեկ հինգերորդ մասն անցավ կայսրությանը։ Սեփական պետականությունը կորցրած հայ ազնվականությունն սկսեց ծառայել հայրենիքը նվաճողների պետական մարմիններում և բանակում։ Դա առաջին հերթին վերաբերում էր կայսրության սահմաններում գտնվող կամ Հայաստանի պարսկական մասից կայսրության մասն անցած կամ անցնող ազնվականությանը. եթե պետք էր զրադաշտական Իրանի և քրիստոնյա կայսրության միջև ընտրություն կատարել, բնական է, նախապատվությունը պիտի տրվեր Հռոմեական (փոքր անց՝ Բյուզանդական) կայսրությանը։

Հայ ազնվականության հոսքը բյուզանդական բանակ և պետական ապարատ ավելի մեծ ծավալ ստացավ Հայաստանի երկրորդ բաժանումից (591 թ.) հետո և հատկապես՝ արաբական տիրապետության ժամանակաշրջանում։ Պատահական չէ, որ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում (IX—X դդ.) հայերը բյուզանդական բանակում և կայսրության ղեկավար մարմիններում, մոտավոր հաշվումներով, կազմում էին 25 տոկոս, եթե ոչ ավելի[1]։

Ազնվականություն ասելով մենք նախ և առաջ նկատի ունենք հայկական նախարարական ընտանիքները։ Գլխավորապես նրանց ներկայացուցիչներն էին Բյուզանդական կայսրության մեջ գրավում բարձր դիրքեր։ Ն. Ադոնցի ասելով՝ «բոլոր այն հայերը, որոնք դերակատարներ են հանդիսանում բյուզանդական պատմության մեջ, գրեթե բացառապես պատկանում էին հայ ազնվականության դասին»[2]։ *Բայց բանն այն է, որ Հայաստանում քաջ հայտնի նախարարական ընտանիքները՝ Մամիկոնյանները, Սյունիները, Կամսարականները, Բագրատունիները, Արծրունիները, Գնունիները և շատ ուրիշներ բյուզանդական աղբյուրներում հանվանե չեն հիշատակված։ Այդ առթիվ Ն. Ադոնցը իրավացիորեն գրում է. «Բյուզանդական հայերի տոհմական ծագումը դժվար է որոշել հաստատապես, եթե օգնության չեն գալիս հայ աղբյուրները դրական ցուցումով»*[3]։ *Ուսումնասիրողները աշխատում են որոշել Բյուզանդիայում աչքի ընկած հայ գործիչների տոհմանունը՝ ելակետ ունենալով նաև այն հանգամանքը, որ «նախարարական տները տոհմական անուններ ունեին մի հայտնի չափով յուրահատուկ, որոնց միջոցով կարելի է երբեմն որոշել, թե ով ո՞ր տոհմին էր պատկանում։ Սակայն հաճախ անունները փոխանցվում էին ամուսնության հետ, որով ավելի դժվարանում է օգտվել անունների ուղեցույցից»*[4]։ *Այստեղ, հարկավ, խոսքը չի վերաբերում այն ընտանիքներին, որոնք առաջացան Բյուզանդական կայսրության մեջ (Կուրկուասներ, Փոկասներ, Սկլերոսներ, Կեկավմենոսներ և այլն), որոնք ազնվական դասից էին, բայց մեր հասկացողությամբ ոչ նախարարական։*

Բյուզանդական կայսրության մեջ բարձր դիրքերի հասած հայերի նախարարական ո՞ր տոհմին պատկանելու ուղղությամբ հայագետներն ու բյուզան-

---

[1] C. Toumanoff. Caucasia ard Byzantium.—Traditio, t. 27, 1971, p. 131.

[2] Ն. Ադոնց. Պատմական ուսումնասիրություններ. Պարիս, 1948, էջ 495։

[3] Նույն տեղում, էջ 486։

[4] Նույն տեղում։

գաղեանները բավական աշխատանք են կատարել դեռևս Մ. Չամչյանից սկսած։ Այստեղ կարելի է նշել Կ. Տեր-Սահակյանին[5]։ Բայց անուրանալի է, որ հիմնական գործը կատարել է Ն. Ադոնցը իր բազմաթիվ գիտական աշխատություններում[6]։ Նա, խոսելով հայ նախարարական ընտանիքների հատկապես IX դարում Բյուզանդիայում խաղացած դերի մասին, առաջին հերթին նշում է Մամիկոնյաններին[7], թեև, ինչպես ասացինք, բյուզանդական և ոչ մի աղբյուրում Մամիկոնյան տոհմանունը հանվանև հիշատակված չէ։ Զեն հիշված և Արծրունիները, թեև տարբեր կովանների հիման վրա ուսումնասիրողները, այդ թվում և Ն. Ադոնցը, ցույց են տալիս Արծրունիների տոհմին պատկանող բյուզանդական մի շարք գործիչների, այդ թվում և Լևոն V Հայկազն կայսերը (813—820 թթ.)[8]։

Հետազոտողները ոչ մի խոսք չեն ասել Գնունյաց նախարարական ընտանիքին պատկանող բյուզանդական հայ գործիչների մասին[9], հասկանալի է, որովհետև այդ մասին բյուզանդական աղբյուրներում ոչ մի ուղղակի տվյալ հայտնի չէր։ Հայկական աղբյուրների ուղղակի վկայությունների կամ կողմնակի տվյալների հիման վրա ցույց է տրված, որ Հերակլիոս կայսեր ժամանակ (610—641 թթ.) 628—635 թթ. Հայաստանում գտնվող բյուզանդական զորքերի հրամանատարն էր իշխան Մժեժ Գնունին[10]։ Նրան ժամանակակից էր և Վարազ Գնել Գնունին[11]։ Մի այլ Մժեժ (Գնունի), Օպսիկիոն բանակաթեմի զորավարը, մասնակցեց Կոստաս II կայսեր (642—668 թթ.) սպանությանը Սիկիլիայի Սիրակուսա քաղաքում, բանակի կողմից կայսր հռչակվեց, բայց կայսեր որդի Կոստանդին IV-ի կողմից ձերբակալվելով, 669 թ. մահապատժի ենթարկվեց[12]։

Հայկական աղբյուրները թույլ չեն տալիս VII դարից հետո Բյուզանդիայում գործած որևէ հայ ազնվականի Գնունիների տոհմին պատկանելու հարց դնել։ Կարելի է միայն նշել, որ Կ. Թումանովի ենթադրությամբ, վերը հիշված Լևոն V կայսրը Գնունիներին էր պատկանում[13]։

Բայց կարո՞ղ էին Գնունիներ լինել Բյուզանդիայում ինչպես նախորդ, այնպես էլ հետագա, հատկապես IX—X դդ.։ Այս ենթադրությունը հաստատվում է և՛ անուղղակի, և՛ ուղղակի տվյալներով։ Հայտնի է, օրինակ, որ դեռևս Հայաստանի առաջին բաժանումից հետո Արշակ III-ի հետ կայսրություն գնաց իշխան Ատատ Գնունին («Ատատ յաղգէն Գնունեաց»), որի պատճառով Հայաս-

---

5 Կ. Տեր-Սահակյան. Հայ կայսերք Բյուզանդիոնի. հ. Ա—Բ, Վենետիկ, 1905։

6 Ն. Ադոնց. Պատմական ուսումնասիրություններ։ Նույնի՝ Études Arméno-Byzantines. Lisbonne, 1965.

7 Ն. Ադոնց. Վասիլ Հայազն (Մեծագործ կայսր, 867—886).—Պատմական ուսումնասիրություններ, էջ 496։ Տե՛ս նաև Հ. Բարթիկյան. Մամիկոնյան (՞) սուրբ Մարիամ Նորավկայի (+902—903 թթ.) բյուզանդական վարքը.—«էջմիածին», 1975, № ԺԲ, 1976, № Ա, Բ։

8 Տե՛ս Մ. Չամչյան. Պատմություն հայոց. հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 432։ Նաև Կ. Տեր-Սահակյան. Հայ կայսերք Բյուզանդիոնի. հ. Ա, էջ 155, 327 (Տեր-Սահակյանը թեև Լևոն V-ին Արծրունի է համարում, սակայն նրա հիմնավորումը քննադատության չի դիմանում)։ Գիտական բացատրությունը տե՛ս. N. Adontz. Sur l'origine de Léon V, empereur de Byzance.—Études Arméno-Byzantines, p. 46.

9 Գնունյաց նախարարական տոհմի մասին մանրամասն տե՛ս Հ. Ոսկյան. Գնունյաց և Ռշտունյաց նախարարությունները. Վիեննա, 1952։

10 Տե՛ս Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Արգարյանի. Երևան, 1979, էջ 131—133։ Նաև՝ Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 13. Բյուզանդական աղբյուրներ, գիրք Դ. Թեոփանես խոստովանող, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի. Երևան, 1983, էջ 35։

11 Պատմութիւն Սեբէոսի, էջ 133։

12 Թեոփանես խոստովանող, էջ 63—64։ Պատմութիւն Սեբէոսի, էջ 131։

13 C. Toumanoff. Studies in Christian Caucasian history. Georgetown, 1963, p. 200, n. 228, p. 205; Idem. Caucasia and Byzantium, p. 135.

տանի պարսկական մասում գտնվող իր ողջ ունեցվածքը պարսից արքա Շապուհի հրամանով բռնագրավվեց[14]։ Հայտնի է նաև, որ Ավարայրի ճակատամարտի նախօրեին վերոհիշյալ Ատատ Գնունու թոռը, «ոմն ի մեծ նախարարացն ի տոհմէն Գնունեաց Ատոմ», նույնպես գնաց Բյուզանդիոն[15]։ Նա, վերադառնալով Հայաստան, մասնակցեց Ավարայրի ճակատամարտին։

Գնունիների նոր հոսանքը դեպի Բյուզանդիա, ամենայն հավանականությամբ, տեղի ունեցավ 774—775 թթ. արաբների դեմ հայոց ապստամբության ճնշումից հետո, երբ Գնունիները Աղիովիտից գաղթեցին Տայք[16], Բյուզանդական կայսրությանը սահմանակից մի նահանգ, որի կապերը Բյուզանդիայի հետ ավելի սերտ էին[17]։ Վարդան պատմիչի ասելով բոլոր Գնունիները տեղափոխվեցին Տայք[18], թեև հայտնի է, որ իրենց հայրենիքում IX և X դդ. դեռևս հիշվում են Գնունյաց տոհմի բազմաթիվ անվանի ներկայացուցիչներ[19]։ Կ. Թումանովի կարծիքով Գնունիները Տայքի վրայով անցան Բյուզանդական կայսրություն և նրանցից մեկն էր կայսր Լևոն V Հայկազնը[20], որը, ինչպես տեսանք, Ն. Ադոնցի համոզմամբ, պատկանում էր Արծրունիներին։

Պատմության ասպարեզից ե՞րբ հեռացան Գնունիները։ Այդ առթիվ Հ. Ոսկյանը գրում է. «Ժ դարուն մեջ գուցե պատմության բեմեն կհեռանան Գնունիներ»[21]։ Կ. Թումանովը նշում է որոշակի թվական. «Գնունիների տոհմը վերջին անգամ հիշվում է շուրջ 914 թ.»[22]։

Այժմ անդրադառնանք մինչև օրս գիտությանը անհայտ մնացած, Գնունյաց տոհմին պատկանող մի իշխանի հանվանե հիշատակությանը բյուզանդական աղբյուրներում, իշխան, որ Բյուզանդական կայսրության մեջ Լևոն VI-ի թագավորության ժամանակ (886—912 թթ.) շատ բարձր դիրքի էր հասել։ Նա այնքան հայտնի անձնավորություն էր, որ հիշատակվում է ժամանակակից գրեթե բոլոր բյուզանդական հեղինակների կողմից։ Նրա՝ Գնունյաց տոհմին պատկանելու հանգամանքի ի հայտ բերելը, ինչպես կտեսնենք ստորև, հնարավորություն կտա որոնելու և գտնելու Բյուզանդական կայսրության մեջ կարևոր դեր խաղացած մի շարք այլ նշանավոր գործիչների, որոնց ոչ միայն Գնունի, այլև առհասարակ հայազգի լինելու մասին բյուզանդագետները չէին էլ կռահում։

Ասենք այստեղ, որ հայերը Բյուզանդական կայսրության պետական, վարչական և ռազմական մարմիններում ամենաբարձր դիրքերի հասան IX դարից սկսած։ 813-ից 820 թ. կայսերական գայիսոնը գտնվում էր Լևոն V-ի ձեռքում։ Նրանից հետո բյուզանդական գահի վրա ենք տեսնում Թեոդորա կայսրուհուն (842—856 թթ.), Ն. Ադոնցի համոզմամբ՝ Մամիկոնյան, և Թեոդորայի ու կայսր Թեոփիլոսի որդի Միքայել III-ին (842—867 թթ.)։ Վերջինիս թագավորության օրոք փաստական իշխանությունը գտնվում էր Թեոդորայի եղբոր՝ Միքայել III-ի

---

14 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց. Տփղիս, 1913, էջ 312։

15 Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին։ Ի լոյս ածեալ բազդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ Ե. Տէր-Մինասեան, Երևան, 1957, էջ 71։ Մի այլ տեղում (էջ 133) «նախարար մի որում անունն էր Ատոմ՝ յազգէն Գնունեաց». տե՛ս և էջ 193։

16 Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ. Վենետիկ, 1862, էջ 77։

17 Հմմտ. C. Toumanoff. Studies in Christian Caucasian history, p. 200, n. 228, p. 205.

18 Հաւաքումն պատմութեան, էջ 77։ Հմմտ. А. Тер-Гевондян. Армения и Арабский халифат. Ереван, 1977, с. 117, 125.

19 Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց. Ս. Պետերբուրգ, 1887, էջ 146։ Նաև՝ Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն հայոց. Թիֆլիս, 1912, էջ 252։ Հմմտ. N. Adontz. Ašot Erkat' ou de Fer, roi d'Arménie de 913 a 929.—Etudes Arméno-Byzantines, p. 270.

20 C. Toumanoff. Studies, p. 205.

21 Հ. Ոսկյան. նշվ. աշխ., էջ 50։

22 C. Toumanoff. Studies, p. 205.

մորեղբայր, կնսար Վարդի ձեռքում, որ կայսրից հետո պետության մեջ առաջին դեմքն էր։ Միքայել III-ին հաջորդեց մի այլ նշանավոր հայ՝ Վասիլ I-ը (867—886 թթ.), որ դարձավ Մակեդոնական (ըստ Հ. Գելցերի՝ Հայկական) հարստության հիմնադիրը։ Վերոհիշյալների իշխանության օրոք հայերի դերը կայսրության կյանքի այլևայլ բնագավառներում հսկայական էր։ Վիճակը տարբեր չէր և Վասիլի որդի Լևոն VI-ի (886—912 թթ.) ժամանակ։ Նրա օրոք արքունիքում ամենաբարձր դիրքը գրավեց Ստիլիանոս Զաուցեսը, որ կայսր Լևոն VI-ի կողմից ստացավ մագիստրոսի բարձր պատվաստիճանը և դրոմոսի լոգոթետի պաշտոնը[23]։ Գիտության մեջ Ստիլիանոս Զաուցեսը իրավամբ համարվում է «կայսերական քաղաքականության գործնական ղեկավարը»[24]։

Ի՞նչ ազգի էր պատկանում Ստիլիանոս Զաուցեսը։ Այդ մասին ուղղակի վկայում է Եվթիմիոս պատրիարքի (906—911 թթ.) անանուն կենսագիրը, դեպքերին ժամանակակից մի հեղինակ։ Նա գրում է. «Ստիլիանոսը, որի հայկական մականունն էր Զաուցես, մակեդոնացի էր, ծագումով հայ, ինչպես և ինքը [կայսրը]»[25], այսինքն Վասիլ I-ը։

Ստիլիանոս Զաուցեսի դուստր Զոյեն Լևոն VI-ի սիրուհին էր։ Ստիլիանոսը իր դստերը կնության տալով Լևոն VI-ին, դարձավ կայսեր աներհայրը։ Լևոն VI-ն էլ հատուկ իր աներոջ համար կյանքի կոչեց «կայսերահայր» (βασιλεοπάτωρ) պատվաստիճանը[26]։ Զոյեն երկար չապրեց. Լևոն VI-ի հետ թագավորելով մեկ տարի և ութ ամիս, վախճանվեց 895 կամ 896 թ. նոյեմբերի 10-ին[27]։ Փոքր անց պալատում վախճանվեց և նրա հայր Ստիլիանոս Զաուցեսը[28], Բյուզանդական կայսրության պատմության մեջ առաջին «կայսերահայրը»։

Ինչո՞ւ ենք այսպես հանգամանորեն խոսում Ստիլիանոս Զաուցեսի և նրա դուստր Զոյեի մասին։ Այն պարզ պատճառով, որ Զոյեն, նախքան կայսեր հետ ամուսնանալը, կինն էր ոմն Թեոդորոս պատրիկի։ Սա էր Ստիլիանոս Զաուցեսի առաջին փեսան։ Թեոդորոս պատրիկին թունավորելուց հետո է, որ Լևոն VI-ը ամուսնացավ նրա կին Զոյեի հետ[29]։ Եթե նկատի ունենանք Ստիլիանոս Զաուցեսի բարձրագույն դիրքը բյուզանդական արքունիքում, ապա դա վկայություն է այն մասին, որ հիշյալ Թեոդորոսը սովորական անձնավորու-

---

23 Theophanes Continuatus, ex recognitione Imm. Bekkeri. Bonnae, 1838, p. 354; Ioannis Scylitzae Synopsis historiarum, editio princeps, recensuit Ioannes Thurn. Berolini et Novi Eboraci, 1973, p. 172.

24 *Տե՛ս* История Византии. Т. II, М., 1967, с. 179—180.

25 P. Karlin-Hayter. Vita Euthymii,—Byzantion, t. XXV—XXVII (1955—1957), fasc. I, p. 10. *Հունարեն բնագրում.* „Στυλιανῷ δὲ τῷ καὶ Ζαούτζῃ κατὰ τὴν τῶν Ἀρμενίων διάλεκτον προσαγορευομένῳ, ὡς ἀτε Μακεδόνι ὄντι καὶ τὸ γένος Ἀρμενίῳ, καθὼς καὶ αὐτός,... *Պատրիարք Եվթիմիոսի վարքի ռուսերեն թարգմանության մեջ այս նախադասությունը այնքան էլ հստակ չէ.* «Царь оставил опекуном Стилиана, армянское имя которого было Зауца (он был армянином, родившимся в Македонии, подобно самому императору)» *(տե՛ս* Две византийские хроники X века. Псамафийская хроника, предисловие, перевод и комментарий А. П. Каждана, М., 1959, с. 28), *քանզի ընդգծում է Վասիլ I-ի և Ստիլիանոս Զաուցեսի ծննդավայրի նույնությունը, այնինչ վարքագիրը նկատի ունի նախ և առաջ այդ երկուսի ազգային պատկանելության նույնությունը։*

26 Theophanes Continuatus, p. 357: *Նաև* Ioannis Scylitzae Synopsis historiarum, p. 175: *Բյուզանդական կայսրության պատմության մեջ երկրորդ կայսերահայր դարձավ նույնպես հայազգի Ռոմանոս Լեկապենոսը, Կոստանդին VII Ծիրանածին կայսեր աները։*

27 Theophanes Continuatus, p. 361; Ioannis Scylitzae Synopsis historiarum, p. 179; P. Karlin-Hayter. La mort de Theophano (10—11—896 ou 895).—Byzantinische Zeitschrift, Bd. 62, 1969, S. 15.

28 Theophanes Continuatus, p. 362.

29 *Եվթիմիոս պատրիարքի վարքագիրը Թեոդորոսի (ինչպես և Լևոն VI-ի նախորդ կին Թեոփանոյի) մահվան մեջ մեղադրում է Ստիլիանոս Զաուցեսի դուստր Զոյեին* (Две византийские хроники X века, с. 43), *բայց ուսումնասիրողները դա հերյուրանք են համարում (նույն տեղում, էջ 23)։*

թյուն չէր[30]։ Նրա ստացած պատրիկի բարձր պատվաստիճանը դրա օգտին է խոսում։

Աղբյուրները տալիս են Թեոդորոսի մականուն-տոհմանունը։ Եվթիմիոս պատրիարքի վարքագիրը նրան անվանում է Թեոդորոս Գուզզուանատից (Գուզունիատես)[31], Թեոփանեսի Շարունակողը՝ Թեոդորոս Գունատզիտզից (Գունիացիցես)[32], Գեորգ Վանականի Շարունակողը՝ Թեոդորոս Գաուանատից (Գաուանիատես)[33], Հովհաննես Սկիլիցեսը՝ Թեոդորոս Գունատզիտզից (Գունիացիցես)[34]։ Միևնույն տոհմական տարբերակների նման առատությունը աղբյուրներում (որ ոչ այլ ինչ են, քան գրչական աղավաղումներ) ընդգծում է հույն գրչի համար այդ տոհմանվան արտասովոր ու օտարահունչ լինելը։ Ասենք այստեղ, որ հունարեն—ատզից (-իցես) վերջածանցը փաղաքշական է (հմմտ. Թեոփիլոս—Թեոփիլիցես, Նիկեփոր—Նիկեփորիցես, Նիկոլաս—Նիկուլիցես) և համապատասխանում է հայերեն «-իկ»-ին (հմմտ. Գրիգորիկ, Արքայիկ, Հովհաննեսիկ և այլն)։ Ասենք նաև, որ-ատից (-ատես)-ն էլ է վերջածանց, որ համապատասխանում է հայերեն «-ացի»-ին, որ մեր համողմամբ «-իցես»-ի հետագա «իմաստավորումն» է։

Արդ, եթե նկատի ունենանք այն փաստը, որ հիշյալ տոհմանունը բյուզանդական ոչ բոլոր աղբյուրներում է բերված -ատզից (-իկ) ածանցով, ապա մենք կարող ենք այն զանց առնել։ Այդ դեպքում ստացվում է, որ տոհմանվան գրության առավել ճիշտ ձևը պահպանել է Թեոփանեսի Շարունակողը՝ Գունատզ (Գունիաց), որ հեշտությամբ կարելի է ուղղել՝ Գ(ո)ունատզ—Գ[ն]ունիաց (հայերենում գրվում է Գնունեաց, բայց արտասանվում է Գնունիաց։ Դեռ ավելին. Նղիշեի երկի Մատենադարանի № 1482 ձեռագրում «ի տոհմէն Գնունեաց»-ի փոխարեն գրված է «ի տոհմէն Գունեաց»[35], այսինքն թույլ է տրված նույն սխալը, ինչ Թեոփանեսի Շարունակողի մոտ։ Եթե, հարկավ, դա երկուսի համար էլ գրչական սխալ համարենք, և ոչ, համենայն դեպս հույնի կողմից, իր համար դժվարահունչ այդ տոհմանվան արտասանությունը «հեշտացնելու» փորձ)։ Այսպիսով ստանում ենք «Թեոդորոս Գնունեաց»։

Ելնելով ասվածից, չպետք է անտեսել և այդ տոհմանվան Եվթիմիոս պատրիարքի վարքագրի բերած տարբերակը՝ Գուզզուանատից (Գուզունիատես)։ Փոքր սրբագրությամբ այն դառնում է Գունուզունատից (Գունունիատես) (ΓΟΥΖΟΥΝΙΑΤΗΣ—ΓΟΥΝΟΥΝΙΑΤΗΣ)։ Ինչպես հայտնի է, հունարենում չկա «ը» գաղտնավանկը, որ հայերենում բառամիջում արտասանվում է, բայց չի գրվում։ Հունարենում այդ «ը»-ին հաճախ փոխարինում է որևէ ձայնավոր (հմմտ. Վիկացի—ΒΙΚΚΑΤΖΙ — Վիիկացի[36], Գ[ը]լակ՝ Γιλάκιος —Գիլակիոս[37])։ Տվյալ դեպքում դրա փոխարեն օգտագործվել է ου (ու)-ն և Գ[ը]նունիատեսի փոխարեն ստացվել է Գունունիատես)։ Այդ երևույթը հաճախ է հանդիպում հայերեն հատուկ անունների հունարեն տառադարձու-

---

[30] Ստիլիանոս Գաուցեսը նախապես իր դստեր՝ Զոյեի ձեռքը առաջարկել էր հայազգի նշանավոր զորավար, սիրելիների դոմեստիկոս (սպարապետ) Նիկեփոր Փոկաս Ավագին (Նիկեփոր II Փոկաս կայսեր պապին), որը սակայն հրաժարվեց, որպեսզի իր դեմ չգրգռի Լևոն VI-ին (Theoph. Cont., p. 359)։

[31] P. Karlin-Hayter. Vita S. Euthymii, p. 50.

[32] Theophanes Continuatus, p. 357.

[33] In Theophanes Continuatus, p. 852.

[34] Ioannis Scylitzae Synopsis historiarum, p. 175.

[35] Նղիշե, էջ 71։

[36] H. Bartikian. La généalogie du Magistros Bagarat, catépan de l'Orient, et des Kékaumènos.—Revue des Études Arméniennes, t. II, 1965, p. 266.

[37] Տե՛ս Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 5. Բյուզանդական աղբյուրներ, գիրք Ա. Պրոկոպիոս Կեսարացի, թարգմանություն բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Հրաչ Բարթիկյանի. Երևան, 1967, էջ 231։

թյան մեջ։ Բաղմաթիվ դեպքերի կարելի է հանդիպել Ագաթանգեղոսի Պատմության հունարեն թարգմանության մեջ. Ռ[ը]շտունեաց աշխարհ՝ Ῥοστουνῶν χώρα[38], իշխանն Ռ[ը]շտունեաց՝ των Ῥοστουνιων τοπάρχης[39], Արծ[ը]րունեաց՝ Ἀρσουρουνων[40]։ «Ը»-ի անցումը «ո»-ի հանդիպում է նաև հայոց լեզվում։ Հենց Ագաթանգեղոսի Պատմության ձեռագրերում կա և «Ռուշտունեաց» ընթերցումը[41]։

Ինչ վերաբերում է մեզ հետաքրքրող տոհմանվանը, ապա հունարենում «ը»-ն, ինչպես տեսանք, կարող է և «ի» տալ։ Նույն Գ[ը]նունի տոհմանունը, բացի Գունունի ձևից, հանդիպում է նաև Գինունի ձևով։ VII դարի վերջին հայերենից հունարեն թարգմանված հայ կաթողիկոսների և թագավորների մի ցուցակում Գնունի տոհմանունը տառադարձված է Κινουνι (Կինունի)[42]։ Չի բացառվում, որ տվյալ դեպքում մենք գործ ունենք միջնադարում այդ տոհմանվան հայոց մեջ տարածված ժողովրդական ստուգաբանության հետ. «Գիտեմ և զԳնունիսդ գինի ունիս, որ զարժանի թագաւորին պատրաստէր զըմպելիսն. որ սքանչելի իմն դիպեալ եղև ըստ գործոյն և անունն. քանզի պատրաստէր զըմպելիսն տրբայի յընտիր և ի համեղ գինեաց, ունէր և կոչումն անուանն Գին»[43]։

Արդ, հիշյալ տոհմանվան -ատես վերջածանցը հունարեն է և, ինչպես վերևում առիթ ունեցանք ցույց տալու, համապատասխանում է հայերեն -ացի (-եցի)-ին և եթե մի պահ անտեսենք այն, ստացվում է Γουνουνι (Գունունի), այսինքն տոհմանվան ուղիղ ձևը։ Ասվածը, հարկավ, շատ գայթակղեցուցիչ է, բայց այդուհանդերձ, մենք համոզված ենք, որ այդ -ատես-ը ոչ այլ ինչ է, քան հույն գրչի (կամ հեղինակի, ինչո՞ւ չէ, գուցե և հենց տոհմանվան կրողի՝ Թեոդորոսի) կողմից Գնունեաց տոհմանվան —եաց ածանցի «հունականացումը» կամ հունարեն իմաստավորումը։

Պետք է նշել նաև, որ եթե հունարենում տվյալ տոհմանունը պահպանել է հայերեն -եաց վերջավորությունը, ուրեմն կարելի է ենթադրել, որ տվյալ Թեոդորոսը կամ նրա ընտանիքը շատ վաղուց չէ, որ անցել էր Բյուզանդիա։ Հայկական աղբյուրներում Գնունի նախարարական ընտանիքին պատկանող ազնվականները հիշվում են ոչ միայն «Գնունի» ուղիղ ձևով, այլ հաճախ «իշխան Գնունեաց», «Տէր Գնունեաց», «ի տանէն Գնունեաց», «յազգէն Գնունեաց» հոլովված ձևով։ Թեոդորոսի տոհմանվան հետ ևս, ամենայն հավանականությամբ, նույն բանն է կատարվել՝ «Թեոդորոս [յազգէն] Գնունեաց» կամ «Թեոդորոս [ի տանէն] Գնունեաց»։

Այսպիսով, հայտնի դարձավ Վասիլ I-ի և Լևոն VI-ի թագավորության ժամանակ բյուզանդական արքունիքում փայլող հայազգի մեկ գործիչ ևս՝ Թեոդորոս Գնունեաց, ավելի շուտ՝ արիստոկրատական մի ընտանիք ևս, քանի որ Թեոդորոսն ունեցել է սերունդ, որ շարունակել է նրա լայն գործունեությունը Բյուզանդիայում։ Հովհաննես Սկիլիցեսը 1015 (կամ 1016) թ. հիշում է զորավար Γεώργιος Γονιτζιάτης (var. Γωνιτζιάτης), որը մասնակցել է Վասիլ II-ի՝ Բուլղարիայի դեմ մղվող պատերազմին և ընկել մարտի դաշտում[44]։ Նրա տոհ-

---

[38] Agathangelus und die Akten Gregors von Armenien. Neu herausgegeben von P. de Lagard. Göttingen, 1887, S. 68.

[39] G. Garitte. Documents pour l'étude du livre d'Agathange, Citta del Vaticano, 1946, p. 73.

[40] Agathangelus uud die Akten Gregors von Armenien, S. 69.

[41] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1909, § 795 (էջ 414, ծան.)։ Հմմտ. և այսօր Ս[ը]մբատ—Սումբատ, Մ[ը]կ[ը]րտիչ—Մուկուչ և այլն։*

[42] *Տե՛ս* G. Garitte. La Narratio de rebus Armeniae, Edition critique et commentaire. Louvain, 1952, p. 405, 435—436.

[43] *Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, Գիրք Բ, գլ. է, էջ 111։*

[44] Ioannis Scylitzae Synopsis historiarum, p. 354.

մանումը՝ Գոնիցիատես, ոչ այլ ինչ է, քան Գնունեաց տոհմանվան մի տարբերակ ևս[45]։ Այսպիսով, եթե Հ. Ոսկյանին հետևելով կարող ենք ասել, թե «Ժ դարուն մեջ գուցե պատմության բեմեն կհեռանան Գնունիները», կարող ենք նկատի ունենալ միայն Հայաստանը։ Բյուզանդական կայսրության մեջ Գնունիները կան նաև XI դարում, գուցե և դրանից էլ հետո։

УНИКАЛЬНОЕ УПОМИНАНИЕ АРМЯНСКОГО НАХАРАРСКОГО РОДОВОГО ИМЕНИ В ВИЗАНТИЙСКИХ ИСТОЧНИКАХ

Доктор ист. наук Р. М. БАРТИКЯН

Резюме

После раздела Армении между Восточноримской (позже—Византийской) империей и Сасанидским Ираном (387 г.) представители армянских знатных родов стали служить в византийской администрации и армии. Приток армянской аристократии в Византию принял более широкие масштабы после захвата Армении арабами. По подсчетам специалистов, примерно четверть состава византийского господствующего класса в IX—X вв. составляли представители знати армянского происхождения. Несмотря на это, в византийских источниках ни один армянский феодальный род (Мамиконяны, Багратуни, Арцруни, Камсараканы, Гнуни и др.) не упомянут.

Исследование показало, что одна знаменитая армянская феодальная фамилия все же встречается в византийских источниках X—XI вв. Речь идет о фамилии патрикия Феодора, зятя знаменитого фаворита Льва VI (886—912) Стилиана Зауцы. Его армянское родовое имя, совершенно чуждое греческим переписчикам, варьируется в рукописях: *Гузуанит, Гузуни[ат], Гуниац[иц], Гауаниат, Гунуазит;* это не что иное, как армянская нахарарская фамилия *Гнуни (Гунуни,* род. падеж *Гнуниац, Гунуниац)*. Исходя из сказанного, нужно и упомянутого в историческом труде Иоанна Скилицы под 1015 (или 1016) годом видного военачальника византийской армии Георгия Гониациата считать принадлежащим к тому же армянскому роду Гнуни.

В арменоведении признано, что род Гнуни сошел с исторической сцены в начале X в. Если это и верно касательно коренной Армении, дело обстоит иначе в Византийской империи, где представители этого рода известны и в более позднее время.

---

45 Ա. Պ. Կաժդանի՝ XI—XII դդ. Բյուզանդական կայսրության հայազգի ավագանուն նվիրված գրքում (А. П. Каждан. Армяне в составе господствующего класса Византийской империи. Ереван, 1975) Գնունիները, բնական է, բացակայում են, այդ թվում և այս Գեորգ Գոնիցիատեսը։